



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Գիտահետազոտական գործունեություն

Համալսարանում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների համատեքստում առանցքային է թողարկվող և սպասարկող ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների դերը, որոնք նպաստում են մի կողմից՝ ուսումնական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և փոփոխություններին ժամանակին ու պատշաճ արձագանքելու ամբիոնների կարողությունների մեծացմանը, իսկ մյուս կողմից՝ հայրենական տնտեսագիտական մտքի զարգացմանը, երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը: Այդ առումով՝ համալսարանում իրականացվել են զգալի աշխատանքներ, որոնց արդյունքները համառոտ ներկայացված են սույն հաշվետվությունում:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել 48 թեմայով՝ որոնցից 46-ը՝ ամբիոնային, 2-ը՝ բյուջետային ֆինանսավորմամբ: Այդ աշխատանքները վերաբերում են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության առավել արդիական, գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին: Ստացվել են գիտական որոշ արդյունքներ տարածքային կառավարման և համաչափ զարգացման հայեցակարգային բարելավման, կառավարչական հաշվառման մեթոդաբանության և կենսաթոշակային համակարգի կատարելագործման, տնտեսական բարեփոխումների սիներգետիկայի, մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործման, աշխատանքի շուկայի ու զբաղվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքի առաջարկի գնահատման, ծառայությունների ոլորտի պայմանագրային

հարաբերությունների բարելավման, ռազմավարական կառավարման, երկրորդային ռեսուրսների օգտագործման էկոլոգոտնտեսական ապահովման ոլորտներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ուժերով 2012 թվականին հրատարակվել է 22 ուսումնական ձեռնարկ, 5 մենագրություն, 7 դասախոսության տեքստ, 390 գիտական հոդված, 71 ուսումնամեթոդական աշխատանք, 3 դասագիրք, 3 գրքույկ (աղյուսակ 1): Արտերկրի գիտական հանդեսներում հրատարակվել է 59 գիտական հոդված:

2012 թվականի ընթացքում, ըստ ժամանակացույցի, ամբիոններում զգալի աշխատանք է կատարվել սեմինարների, կլոր սեղանների և գիտական բանավեճերի ուղղությամբ (Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, Ֆինանսական հաշվառման, Մակրոէկոնոմիկայի, Օտար լեզուների, Ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոններ):

Չնայած հաշվետու տարում գիտահետազոտական աշխատանքների կատարման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին՝ դեռևս առկա են բացթողումներ և թերություններ. բացակայում է ամբիոնների միջև փոխհամագործակցությունը, նեղ է թեմաների ընտրությունը, իսկ երբեմն, հեռու գործնական կիրառությունից, հետազոտությունների արդյունքները չեն հրապարակվում ու ներկայացվում շահագրգիռ պետական մարմիններ կամ մասնավոր հատվածի կազմակերպություններ, որոշ ամբիոններում ցածր է անձնակազմի ընդգրկվածությունը, ինչով չի կատարվում 2011 թվականի նոյեմբերի 30-ի գիտական խորհրդի որոշումը: Բացի դրանից, դեռևս ցածր է միջազգային համագործակցության աստիճանը և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի շարժունակությունը:

Պրոֆետրադասախոսական կազմի 2012 թվականի հրատարակած աշխատությունների թիվն ըստ ամբիոնների

N	Ամբիոններ	Դասագիրք	Ուսումնական ձեռնարկ	Մենագրություն	Դասախոսության տեքստ	Հոդված, այդ թվում՝ միջազգ. ամսագր.	Ուսումնամեթոդական աշխատանք	Խնդրագիրք	Բառարան
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Կառավարում**	1*	4		1	24/ 3	1*		
2.	Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարում					11			
3.	Աշխատանքի տնտեսագիտություն					7/2	1		
4.	Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում					33/ 11			
5.	Տնտեսագիտության տեսություն				1	28/5			
6.	Մակրոէկոնոմիկա	1	1			28/2			
7.	Միջազգային տնտեսական հարաբերություններ		4	2		25/6	30		
8.	Բնօգտագործման տնտեսագիտություն		1	1	1	22/4	4		
9.	Ֆինանսներ				3	5/2	2		
10.	Բանկային գործ և ապահովագրություն					47/9			
11.	Կառավարչական հաշվառում և աուդիտ		1			18/4			
12.	Ֆինանսական հաշվառում					6			
13.	Իրավագիտություն և քաղաքագիտություն					5			

14.	Բիզնեսի կազմակերպում					11			
15.	Մարքեթինգ		1			13	16		
16.	Կոմերցիա		1			3	14		
17.	Ապրանքագիտություն և տեխնոլոգիա*		1			14/1*			
18.	Տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր		1			14/ 3			
19.	Տնտեսամաթեմատիկական մեթոդներ			1		28/4			
20.	Վիճակագրություն		2			10			
21.	Փիլիսոփայություն և հայոց պատմություն		3 գրքույկ	1	1	8	2		
22.	Բարձրագույն մաթեմատիկա					4/2			
23.	Հայոց և ռուսաց լեզուներ**	1*				5*			
24.	Օտար լեզուներ**		4**			9/1			
25.	Ֆիզդաստիարակություն, արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանություն		1			12/1	1		
Ընդամենը		3	22+3	5	7	390/59	71		

Ծանոթություն:

**** Հրատարակվել է համահեղինակությամբ:**

Բյուջետային ֆինանսավորմամբ թեմաներ

2012 թվականին համալսարանում կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ երկու թեմա՝ «Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա» և «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»:

Գիտաժողովներ

2012 թվականի նոյեմբերի 16-18-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպվել և անցկացվել է գիտաժողով՝ «Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» խորագրով: Գիտաժողովին մասնակցել են ՀՀ վարչապետ Տ.Ս.Սարգսյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Մ.Դավթյանը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Ա.Վ.Ղազարյանը, ՀՀ ԿԲ նախագահի առաջին տեղակալ Ն.Ն.Երիցյանը, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և այլ բուհերի ներկայացուցիչներ: Արդեն տպագրության է պատրաստ 50 մամուլ ծավալով, 102 գիտական հոդված պարունակող ժողովածուն, ինչպես նաև գիտաժողովի արդյունքների հրապարակված ամփոփ հաշվետվությունը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացվել են մի շարք միջազգային զեկույցներ: Միջազգային հրատարակումների քանակը թեև նախորդ տարվա համեմատ աճել է, սակայն արդյունավետությունը շարունակվում է մնալ ցածր:

2012 թվականին համալսարանի աշխատակիցները մասնակցել են Գերմանիայում (Ֆրանկֆուրտ), Իտալիայում (Ֆլորենցիա, Ճենովա), Հունգարիայում (Բուդապեշտ), Բուլղարիայում (Պլովդիվ), Կանադայում, ՌԴ-ում (Դոնի Ռոստով, Չերոկասարի, Կուրսն, Սարատով, Եկատերինբուրգ), Ուկրաինայում (Կիև, Դոնեցկ, Սումի), Վրաստանում (Թբիլիսի) անցկացված գիտաժողովներին և հրատարակել գիտական հոդվածներ:

2012 թվականին տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ Արման Սարգսյանը մասնակցել է միջազգային գիտաժողովների Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, Ուկրաինայի Կիև քաղաքում,

ինչպես նաև մասնակցել է Բուդապեշտում Եվրոպայի կենտրոնական համալսարանի դասախոսական ու հետազոտական փորձի կատարելագործման սեմինարներին: Ա.Սարգսյանը մասնակցություն է ունեցել Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում անցկացվելիք կառավարման հարցերին վերաբերող սեմինարներին:

Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասիստենտ Նարեկ Կեսոյանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին զեկույցով հանդես է եկել Դոնեցկի ազգային համալսարանում կազմակերպված 10-րդ հոբելյանական միջազգային գիտաժողովին:

Բնօգտագործման ամբիոնի ասիստենտ Գագիկ Աղաջանյանը մասնակցել է վերապատրաստման դասընթացների (Իսպանիա, Universitat Oberta de Catalunya – International Graduate Institute), 30.03.2012-02.07.2012՝ «Պարենային անվտանգության գնահատում և գործողություններ» (Specialization in Food Security: Assessment and Action (with FAO)), և 30.03.2012-01.06.2012՝ «Պարենային անվտանգություն, իրավական կարգավորում և քաղաքականություն» (Food Security Advocacy and Action masn) մասնագիտացումներով և ստացել է համապատասխան սերտիֆիկատ: Այժմ մասնակցում է դասընթացների երկրորդ փուլին, որի ավարտից հետո նրան կշնորհվի մագիստրոսի կոչում վերոնշյալ մասնագիտացմամբ:

Այդ ծրագրի շրջանակներում բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի 7 մագիստրանտ մասնակցել է ՀՀ-ում FAO-ի և ՀՀ վիճակագրության պետական ծառայության կողմից կազմակերպված համաժողովներին և ստացել համապատասխան սերտիֆիկատներ:

Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնը համագործակցել է USAID ԱՄՆ ՄԶԳ-ի հետ՝ «Ձեռնարկությունների զարգացման և մրցունակության բարձրացման» ծրագրի շրջանակներում:

Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դասախոսները մասնակցել են տարբեր միջազգային համաժողովների և հրատարակել են հոդվածներ: Մասնավորապես՝ ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Միտոյանը մասնակցել է ավանդական դարձած 8-րդ միջազգային դպրոց-սեմինարին և որպես կազմկոմիտեի անդամ՝ սեմինարին ներկայացրել է մեր համալսարանը: Ամբիոնի դոցենտ Միկեր Աղալովյանը 2012 թվականի հունիսի 10-22-ը մասնակցել և զեկույցումներով հանդես է եկել Իտալիայում կազմակերպված երկու միջազգային գիտաժողովների՝ 4-th International conference

"Smart Materials, Structures and Systems" CIMTEC 2012 Montecatini Terme (10.06.-14.06.)
և 5-th European Conference on Structural Control, EACS 2012 (Ճենովա, 18.06.-20.06.):

Օտար լեզուների ամբիոնի դասախոսները մասնակցել են Միացյալ Թագավորության անգլերեն դասավանդող ուսուցիչների Cambridge University Press վերապատրաստման կենտրոնի մեկամսյա սեմինարին, ինչպես նաև Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարին: Ամբիոնի դասախոս Քրիստինե Թորգոմյանը մասնակցել է Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում կազմակերպված «Լեզու և գրքալիզացիա, նոր մարտահրավերներ» գիտաժողովին:

Գիտական կապեր և համագործակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Ռոստովի պետական տնտեսագիտական և ՌԴ հարավային դաշնային համալսարանների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հետ գիտատեխնիկական համագործակցությունը:

2012 թվականի օգոստոսի 29-ին ստորագրվել է փոխհամաձայնության հուշագիր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և «Եվրասիա» միջազգային համալսարանի միջև, որով սկիզբ է դրվել պետական և մասնավոր հատվածի համագործակցությանը:

Ուսանողական գիտական միջոցառումներ

Համալսարանի ուսանողների մասնակցությունը գիտական կյանքին դրսևորվել է հետևյալ միջոցառումներով.

Ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրանտ Աստղիկ Ավետիսյանի ներկայացրած «Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները» գիտական աշխատանքը հաղթող է ճանաչվել Ռուսաստանի Դաշնության կառավարությանը կից ֆինանսական համալսարանի կազմակերպած Ռուսաստանի և ԱՊՀ երկրների ուսանողների և ասպիրանտների գիտական աշխատանքների և հետազոտությունների մրցույթի «Արդյունավետ լուծումների որոնում» անվանակարգում: Գիտական աշխատանքի բարձր մակարդակի, ինչպես նաև ստեղծագործական մոտեցման և մանկավարժական վարպետության համար

պատվոգիր է շնորհվել նաև գիտական աշխատանքի ղեկավարին՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի դոցենտ Աշոտ Եղիազարյանին:

Մարտի 15-ին համալսարանի պատվիրակությունը մասնակցել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն. ընդառաջ քայլ» խորագրով Երիտասարդության եվրասիական տնտեսագիտական համաժողովի երրորդ փուլի շրջանակներում տեղի ունեցած գիտաժողովին: Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ Աստղիկ Ավետիսյանը, Զարուհի Մարգարյանը, Վազգեն Այվազյանը, Անի Անտոնյանը, Լիզա Սահակյանը, Իզոլդա Արշակյանը, Հարություն Ավազյանը գործնական մասնակցություն ունեցան քննարկումներին ու մտքերի փոխանակություններին:

2012 թվականի հոկտեմբերի 31-ին անցկացվել է համահամալսարանական ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) 34-րդ նստաշրջանը: Բակալավրիատի 24 զեկուցողներից հաղթող է ճանաչվել «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Դիաննա Ասրյանը՝ «ՀՀ տնտեսության անվտանգության վերլուծությունը ժամանակակից տնտեսության պայմաններում» թեմայով, երկրորդ և երրորդ մրցանակային տեղերը համապատասխանաբար զբաղեցրեցրել են Իզոլդա Արշակյանը՝ «Դրամավարկային քաղաքականության փոխարժեքի նպատակադրումը» թեմայով և Մարիամ Պողոսյանը՝ «Անվճարունակության և սնանկության վերլուծությունը կազմակերպություններում» թեմայով:

Մագիստրատուրայի 7 զեկուցողներից հաղթող է ճանաչվել «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրանտ Անուշ Միքայելյանը՝ «Շահույթի ավելացման գծով պահուստների վերլուծությունը» թեմայով, մրցանակային տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են Էդուարդ Հակոբյանը՝ «ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման մակարդակի գնահատումը» թեմայով և Զուլիետա Աթայանը՝ «Բնօգտագործման և բնապահպանական վճարների համակարգի ձևավորման առանձնահատկությունները և նպատակային օգտագործումը ՀՀ-ում» թեմայով:

2012 թվականի հոկտեմբերին համալսարանի ֆինանսական, կառավարման, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների, հաշվապահական հաշվառման և աուդիտի, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետների 28 ուսանողներ մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ անցկացված Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության հիմնադրման 65-ամյակին նվիրված ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովին:

Նոյեմբերի 14-ին Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի նիստերի սրահում Եվրասիական տնտեսական երիտասարդական համաժողովի շրջանակներում կազմակերպվել է «Կենսաթոշակային բարեփոխումները Հայաստանում. խնդիրներ և հեռանկարներ» խորագրով «Կլոր սեղան», որին մասնակցել և «ՀՀ տնտեսության կուտակային կենսաթոշակային համակարգի ազդեցության ուղիները» թեմայով զեկուցմամբ հանդես է եկել ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնի ասպիրանտ Ասյա Խալաթյանը:

Նոյեմբերի 14-18-ը Վարշավայի տնտեսագիտության դպրոցի կողմից կազմակերպված «Փորձի փոխանակում» խորագրով միջազգային նստաշրջանին մասնակցել են համալսարանի կառավարման ֆակուլտետի «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտացման 4-րդ կուրսի ուսանողներ Արթուր Մարկոսյանը, Հարություն Պողոսյանը, Մանե Ենգոյանը և Նարինե Գևորգյանը:

Դրամաշնորհներ

Համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ 2012 թվականի սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է դրվել ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը, համաձայն որի՝ հայտարարվել է ներհամալսարանական գիտական և գիտահետազոտական աշխատանքների կատարման մրցույթ: Մրցույթի արդյունքներով ընտրված գիտահետազոտական նախագծերը կֆինանսավորվեն 2013 թվականի հունվարի 1-ից:

2012 թվականի դեկտեմբերին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, «Եվրասիա» միջազգային համալսարանը և Հայաստանի

արդյունաբերողների և գործարարների միությունը ներկայացրել են «**Դասավանդում և ուսումնառություն տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներով**» համատեղ **ծրագիրը** ՀՀ բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամին:

Լուծման ենթակա հիմնախնդիրներ

Գիտահետազոտական գործունեության ասպարեզում, դրական տեղաշարժերի հետ մեկտեղ, դեռևս առկա են բացթողումներ, որոնք պետք է շտկվեն: Հաշվի առնելով, որ ապագայի համալսարաններն ավելի շատ հանդիսանալու են հետազոտական համալսարաններ, չի կարելի անտեսել համալսարանի որոշ ամբիոնների ոչ գործուն մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին, բարձրարժեք գիտական հրապարակումների, միջազգային գիտական կապերի, կատարվող դրամաշնորհային թեմաների անբավարարությունը, մեր գիտնականների՝ ոչ լիարժեքորեն ներգրավվածությունը հանրապետության կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում միջամբիոնային համագործակցության բացակայությունը:

Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում «Հայաստանի տնտեսական համաժողով - 2013թ.» միջոցառման կազմակերպման առումով:

Ռեկտորատը, գիտության բաժինը, ամբիոնները պարտավոր են ակտիվացնելու գիտահետազոտական աշխատանքները, իրական քայլեր կատարելու հետազոտական համալսարան դառնալու ճանապարհին: